

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ ՄԻ ՇԱՐՔ ԲՆԱԴԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ  
ԿՈՆՎԵՆՑԻԱՆԵՐԻՑ ԲԽՈՂ՝ ՀՀ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ  
ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Գլխավոր տեղեկություն

Համար N 1840-Ն

Տիպ Որոշում

Ակտի տիպ Պաշտոնական Իսկրպորացիա (30.07.2005-մինչ օրս)

Կարգավիճակ Գործում է

Սկզբնաղբյուր ՀՀՊՏ 2005.01.19/4(376) Հոդ. 78

Ընդունող մարմին ՀՀ կառավարություն

Ընդունման ամսաթիվ 02.12.2004

Ստորագրող մարմին ՀՀ վարչապետ

Ստորագրման ամսաթիվ 30.12.2004

Վավերացնող մարմին ՀՀ Նախագահ

Վավերացման ամսաթիվ 05.01.2005

Ուժի մեջ մտնելու ամսաթիվ 29.01.2005

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ

2 դեկտեմբերի 2004 թվականի N 1840-Ն

#### ՄԻ ԾԱՐՔ ԲՆԱԴԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿՈՆՎԵՆՏԻԱՆԵՐԻՑ ԲԵՈՂ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով միջազգային բնապահպանական կոնվենցիաներից բխող՝ Հայաստանի Հանրապետության պարտավորությունները և Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի դեկտեմբերի 24-ի N 1930-Ն որոշման 165-րդ կետը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը **որոշում է.**

1. Հաստատել մի շարք բնապահպանական միջազգային կոնվենցիաներից բխող՝ Հայաստանի Հանրապետության պարտավորությունների կատարման միջոցառումների ցանկը՝ համաձայն հավելվածի:

2. Հանձնարարել Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարին, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարին, Հայաստանի Հանրապետության առևտրի և տնտեսական զարգացման նախարարին, Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարին, Հայաստանի Հանրապետության Էներգետիկայի նախարարին, Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարին, Հայաստանի Հանրապետության տրանսպորտի և կապի նախարարին, Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարին, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարին, Հայաստանի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարին, Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարին, Հայաստանի Հանրապետության մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարին, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր մաքսային պետական կոմիտեի նախագահին, Հայաստանի Հանրապետության կառավարության կոմիտեի նախագահին, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր արտակարգ իրավիճակների վարչության պետին և առաջարկել Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի նախագահին ու Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի նախագահին մինչև յուրաքանչյուր կիսամյակին հաջորդող ամսվա 15-րդ օրը Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարություն ներկայացնել տեղեկատվություն սույն որոշման հավելվածով նախատեսված պարտավորությունների կատարման ընթացքի մասին:

3. Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարին՝

ա) մինչև յուրաքանչյուր կիսամյակին հաջորդող ամսվա 30-րդ օրն ամփոփել սույն որոշման 2-րդ կետում նշված տեղեկատվությունը և Հայաստանի Հանրապետության կառավարություն ներկայացնել սույն որոշման հավելվածում նշված՝ միջազգային բնապահպանական կոնվենցիաներից բխող՝ Հայաստանի Հանրապետության պարտավորությունների կատարման ընթացքի մասին հաշվետվություն.

բ) եռամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության ընտանիքային ներկայացնել 3 գլոբալ՝ «Կենսաբազմազանության մասին», «Կլիմայի փոփոխության մասին» և «Անապատացման դեմ պայքարի մասին» կոնվենցիաներից բխող՝ խաչածեղի խնդիրների իրականացման միջոցառումների ցանկը:

**(3-րդ կետը փոփ. 16.06.05 N 880-Ն)**

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Հայաստանի Հանրապետության  
վարչապետ

Ա. Մարգարյան

2004 թ. դեկտեմբերի 30  
երևան

Հավելված  
ՀՀ կառավարության 2004 թվականի  
դեկտեմբերի 2-ի N 1840-Ն որոշման

**ՄԻ ՇԱՐՔ ԲՆԱԴԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿՈՆՎԵՆՏԻԱԼՆԵՐԻՑ ԲԽՈՂ` ՀԱՅԱՍՏԱՆԻ**

**ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ**

| NN<br>ը/կ | Միջոցառման անվանումը                                                                                                                                                                                                                                                                   | Կոնվենցիայի<br>հոդվածը                                | Կատարման համար պատասխանատու<br>պետական կառավարման մարմինները                                                                                                                                                                                                                                                                                                                     | Կատարման ժամկետը          | Իրականացվող<br>միջոցառման<br>ֆինանսավորման<br>աղբյուրը                               |
|-----------|----------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|-------------------------------------------------------|----------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|---------------------------|--------------------------------------------------------------------------------------|
| 1         | 2                                                                                                                                                                                                                                                                                      | 3                                                     | 4                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                | 5                         | 6                                                                                    |
| I.        | <b>ՄԱԿ-ի «Կլիմայի փոփոխության մասին» շրջանակային կոնվենցիա</b>                                                                                                                                                                                                                         |                                                       |                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                  |                           |                                                                                      |
| 1.        | Ձերմոցային գազերի մարդածին արտանետումների երկրորդ կադաստրի մշակում                                                                                                                                                                                                                     | 4.1 a)<br>12.1a)                                      | ՀՀ բնապահպանության նախարարություն<br>ՀՀ էներգետիկայի նախարարություն<br>ՀՀ գյուղատնտեսության նախարարություն<br>ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման<br>նախարարություն<br>ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն                                                                                                                                                                           | 2007 թ.                   | ՄՖԿ/միջազգային ֆինանսական կազմակերպություններ (օժանդակություն) դրամաշնորհներ**       |
| 2.        | Ձերմոցային գազերի գույքագրման անորոշությունների կրճատման և ջերմոցային գազերի ազգային կադաստրի կատարելագործման նպատակով թափոններից և գյուղատնտեսական սեկտորից արտանետումների հաշվառման կատարելագործում                                                                                  | 4.1 a)<br>12.1a)                                      | ՀՀ բնապահպանության նախարարություն                                                                                                                                                                                                                                                                                                                                                | 2005-2006 թթ.             | Իրականացվում է Գլոբալ բնապահպանական հիմնադրամի տարածաշրջանային ծրագրի շրջանակներում: |
| 3.        | Ձերմոցային գազերի մարդածին արտանետումների կրճատման և կլանիչների զարգացման, ինչպես նաև կլիմայի կանխատեսվող փոփոխություններին հարմարվելու (ադապտացիա) միջոցառումների ծրագրերի մշակում                                                                                                    | 4.1b)                                                 | ՀՀ բնապահպանության նախարարություն<br>ՀՀ էներգետիկայի նախարարություն<br>ՀՀ գյուղատնտեսության նախարարություն<br>ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման<br>նախարարություն<br>ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն<br>ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա<br>ՀՀ առողջապահության նախարարություն<br>ՀՀ հանրային ծառայությունները<br>կարգավորող հանձնաժողով<br>ՀՀ քաղաքաշինության նախարարություն | 2007 թ.                   | ՄՖԿ օժանդակություն/ դրամաշնորհներ**                                                  |
| 3.1       | Կլիմայի համակարգի և նրա փոփոխության կանխատեսման, ինչպես նաև տնտեսության և բնության խոցելի տարրերի վրա կլիմայի փոփոխության հնարավոր ազդեցության բացահայտման նպատակով ուսումնասիրությունների կազմակերպում և իրականացում                                                                  | 4.1b)<br>5.                                           | ՀՀ բնապահպանության նախարարություն<br>ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա<br>ՀՀ գյուղատնտեսության նախարարություն<br>ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման<br>նախարարություն<br>ՀՀ առողջապահության նախարարություն<br>ՀՀ կրթության և գիտության<br>նախարարություն                                                                                                                           | 2005 թ. և<br>շարունակական | ՄՖԿ օժանդակություն/ դրամաշնորհներ **                                                 |
| 3.2       | Կլիմայի փոփոխության նկատմամբ հարմարվողականության, ինչպես նաև ջերմոցային գազերի արտանետումների կրճատման ու կլանիչների զարգացման քաղաքականության և ռազմավարության մշակում                                                                                                                | 4.1 b)                                                | ՀՀ բնապահպանության նախարարություն<br>ՀՀ էներգետիկայի նախարարություն<br>ՀՀ գյուղատնտեսության նախարարություն<br>ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման<br>նախարարություն<br>ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն<br>ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա<br>ՀՀ առողջապահության նախարարություն<br>ՀՀ քաղաքաշինության նախարարություն                                                           | 2008 թ.                   | ՄՖԿ օժանդակություն/ դրամաշնորհներ**                                                  |
| 4.        | Ձերմոցային գազերի արտանետումների կրճատմանը նպաստող, ինչպես նաև կլիմայի փոփոխության հետևանքներին հարմարվելու (ադապտացիա) տեխնոլոգիաների մշակման, փոխանցման և կիրառման մեխանիզմների ստեղծում                                                                                             | 4.1 c)<br>4.1 e)                                      | ՀՀ բնապահպանության նախարարություն<br>ՀՀ էներգետիկայի նախարարություն<br>ՀՀ գյուղատնտեսության նախարարություն<br>ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման<br>նախարարություն<br>ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն<br>ՀՀ հանրային ծառայությունները<br>կարգավորող հանձնաժողով                                                                                                                 | 2005 թ.<br>և շարունակական | ՄՖԿ օժանդակություն/ դրամաշնորհներ**                                                  |
| 5.        | Ձերմոցային գազերի կլանիչների և կուտակիչների ռացիոնալ օգտագործման, պահպանման և որակի բարձրացման նպատակով անտառային սեկտորի և հողօգտագործման բնագավառում նախագծային առաջարկությունների մշակում                                                                                           | 4.1 d)                                                | ՀՀ բնապահպանության նախարարություն<br>ՀՀ գյուղատնտեսության նախարարություն                                                                                                                                                                                                                                                                                                         | 2005 թ.<br>և շարունակական | ՄՖԿ օժանդակություն/ դրամաշնորհներ**                                                  |
| 6.        | Կոնվենցիայի կողմ երկրների հետ համապատասխան տեղեկատվության փոխանակման մեխանիզմների ստեղծում                                                                                                                                                                                             | 4.1 h)                                                | ՀՀ բնապահպանության նախարարություն                                                                                                                                                                                                                                                                                                                                                | 2005 թ.<br>և շարունակական | ՀՀ պետական բյուջե՝ համապատասխան մարմնի պահպանման ծախսեր                              |
| 7.        | Կլիմայի փոփոխության կոնվենցիայի ներքո ընդունված Կիոտոյի արձանագրության դրույթներին համապատասխան արձանագրության 12-րդ հոդվածով սահմանված մաքուր զարգացման մեխանիզմով Հայաստանի Հանրապետությունում ներդրումային նախագծեր իրականացնելու համար ընթացակարգային մեխանիզմի մշակում և ներդրում |                                                       | ՀՀ բնապահպանության նախարարություն<br>ՀՀ էներգետիկայի նախարարություն<br>ՀՀ ֆինանսների և եկոնոմիկայի<br>նախարարություն<br>ՀՀ գյուղատնտեսության նախարարություն<br>ՀՀ քաղաքաշինության նախարարություն<br>ՀՀ արտաքին գործերի նախարարություն<br>ՀՀ հանրային ծառայությունները<br>կարգավորող հանձնաժողով                                                                                  | 2006 թ.                   | ՄՖԿ օժանդակություն/ դրամաշնորհներ**                                                  |
| 8.        | Կլիմայի փոփոխության մասին երկրորդ ազգային գեկույցի պատրաստում և կոնվենցիայի կողմերի կոնֆերանսին ներկայացում                                                                                                                                                                            | 4<br>12                                               | ՀՀ բնապահպանության նախարարություն                                                                                                                                                                                                                                                                                                                                                | 2005-<br>2008 թթ.         | ՄՖԿ օժանդակություն/ դրամաշնորհներ**                                                  |
| II.       | <b>ՄԱԿ-ի «Օզոնային շերտի պահպանման մասին» Կիենայի կոնվենցիա<br/>«Օզոնային շերտը քայքայող նյութերի մասին» Մոնրեալի արձանագրություն</b>                                                                                                                                                  |                                                       |                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                  |                           |                                                                                      |
| 1.        | Օզոնային շերտը քայքայող նյութերի փոխարինման միջոցառումների իրականացում՝ ըստ հաստատված ազգային ծրագրի                                                                                                                                                                                   | կոնվենցիայի<br>2-րդ,<br>2-րդ, 4-րդ, 7-րդ<br>հոդվածներ | ՀՀ բնապահպանության նախարարություն<br>ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման<br>նախարարություն<br>ՀՀ կառավարության առընթեր մաքսային<br>պետական կոմիտե<br>ՀՀ կրթության և գիտության                                                                                                                                                                                                        | 2006-2008 թթ.             | ՄՖԿ օժանդակություն/ դրամաշնորհներ**                                                  |

|       |                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                            |       |                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                |                                                                                                                                                |
|-------|--------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|-------|----------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|
| III.  |                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                            |       | Նախարարություն                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                 |                                                                                                                                                |
|       | ՄԱԿ-ի «Կենսաբազմազանության մասին» կոնվենցիա                                                                                                                                                                                                                                                                                                                                                |       |                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                |                                                                                                                                                |
| 1.    | Կենսաբազմազանության ազգային ինդիկատորների որոշում                                                                                                                                                                                                                                                                                                                                          | 7     | ՀՀ բնապահպանության նախարարություն<br>ՀՀ գյուղատնտեսության նախարարություն<br>ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                 | 2005-2006 թթ.<br><br>ՄՖԿ և դոնորների օժանդակությամբ /դրամաշնորհներ**                                                                           |
| 2.    | Տաքսանոմիայի բնագավառում՝<br>- գործողությունների ազգային ծրագրի մշակում<br><br>ըստ հաստատված ազգային ծրագրի իրականացում                                                                                                                                                                                                                                                                    | 7     | ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա<br>ՀՀ բնապահպանության նախարարություն                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                        | 2006 թ.<br><br>2007-2008 թթ.<br><br>ՄՖԿ և դոնորների օժանդակությամբ (դրամաշնորհներ)**<br><br>ՀՀ պետական բյուջե՝ ծրագրային ֆինանսավորում*        |
| 3.    | ա/ «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» Նոր ՀՀ օրենքի նախագծի՝ սահմանված կարգով ներկայացում ՀՀ կառավարություն                                                                                                                                                                                                                                                                      | 8     | ՀՀ բնապահպանության նախարարություն                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                              | 2005 թ.<br><br>«Բնական պաշարների կառավարում և չքավորության նվազեցում» ծրագրի շրջանակներում                                                     |
|       | բ/ «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» ՀՀ օրենքից բխող օրենսդրական ակտերի մշակում և սահմանված կարգով ՀՀ կառավարություն ներկայացում՝<br>- բնության հատուկ պահպանվող տարածքների մոնիտորինգի կազմակերպման և իրականացման կարգ<br>- բնության հատուկ պահպանվող տարածքների պետական կադաստրի վարման կարգ<br>- բնության հատուկ պահպանվող տարածքների օգտագործման կարգ                       |       | ՀՀ բնապահպանության նախարարություն                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                              | 2006-2008 թթ.<br><br>«Բնական պաշարների կառավարում և չքավորության նվազեցում» ծրագրի շրջանակներում (դրամաշնորհ)                                  |
|       | գ/ վտանգված տեսակների վերարտադրության, վերականգնման և դրանց ռեինտրոդուկցիայի վերաբերյալ՝<br><br><ul style="list-style-type: none"><li>• ծրագրերի մշակում</li><li>• ծրագրի միջոցառումների իրականացում</li></ul>                                                                                                                                                                             |       | ՀՀ բնապահպանության նախարարություն<br>ՀՀ գյուղատնտեսության նախարարություն<br>ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                 | 2005-2007 թթ.<br><br>2007-2009 թթ.<br><br>ՀՀ պետական բյուջե՝ ծրագրային ֆինանսավորում<br><br>ՄՖԿ և դոնորների օժանդակությամբ /դրամաշնորհներ/**   |
|       | դ/ Էկոհամակարգերի, բնական ապրելավայրերի և կենսաբազմազանության համար ինտրադուկցված օտարածին տեսակների ազդեցության գնահատում և օգտագործումը կարգավորող միջոցառումների սահմանում                                                                                                                                                                                                              |       | ՀՀ բնապահպանության նախարարություն<br>ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                        | 2006-2007 թթ.<br><br>ՀՀ պետական բյուջե՝ համապատասխան մարմնի պահպանման ծախսեր                                                                   |
| 4.    | Կենսաբազմազանության ռազմավարության և գործողությունների ազգային ծրագրով նախատեսված կենսաբազմազանության և դրա բաղադրիչների պահպանության և կայուն օգտագործման վերաբերյալ գիտատեխնիկական ուսուցման, կադրերի պատրաստման, վերապատրաստման և փորձի փոխանակման՝<br><br><ul style="list-style-type: none"><li>• նպատակային ծրագրերի պատրաստում</li><li>• համապատասխան ծրագրերի իրականացում</li></ul> | 12    | ՀՀ բնապահպանության նախարարություն<br>ՀՀ կրթության և գիտության նախարարություն<br>ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա<br>ՀՀ գյուղատնտեսության նախարարություն<br>ՀՀ առողջապահության նախարարություն                                                                                                                                                                                                                                                                                                                                                                 | 2006-2008 թթ.<br><br>2007-2009 թթ.<br><br>ՀՀ պետական բյուջե՝ ծրագրային ֆինանսավորում *<br><br>ՄՖԿ և դոնորների օժանդակությամբ (դրամաշնորհներ)** |
| 5.    | Կենսաբազմազանության ռազմավարության և գործողությունների ազգային ծրագրով նախատեսված կենսաբազմազանության պահպանության և կայուն օգտագործման վերաբերյալ հասարակության լուսաբանում և իրազեկության բարձրացում՝ միջոցառումների իրականացում                                                                                                                                                         | 13    | ՀՀ բնապահպանության նախարարություն<br>ՀՀ կրթության և գիտության նախարարություն<br>ՀՀ գյուղատնտեսության նախարարություն                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                            | 2006-2009 թթ.<br><br>ՀՀ պետական բյուջե՝ ծրագրային ֆինանսավորում *, ՄՖԿ և դոնորների օժանդակությամբ (դրամաշնորհներ)**                            |
| 6.    | Երրորդ ազգային զեկույցի պատրաստում և ներկայացում կոնվենցիայի քարտուղարություն                                                                                                                                                                                                                                                                                                              | 26    | ՀՀ բնապահպանության նախարարություն<br>ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                        | 2005 թ.<br><br>ՄՖԿ և դոնորների օժանդակությամբ (դրամաշնորհներ)**                                                                                |
| III-1 | «Կենսաբանական անվտանգության մասին» կարթագենյան արձանագրություն                                                                                                                                                                                                                                                                                                                             |       |                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                |                                                                                                                                                |
|       | «Կենսաբանական անվտանգության մասին» կարթագենյան արձանագրության ինդիկսների լուծման ազգային գործողությունների պլանի մշակում                                                                                                                                                                                                                                                                   | 14-19 | ՀՀ բնապահպանության նախարարություն<br>ՀՀ գյուղատնտեսության նախարարություն<br>ՀՀ առողջապահության նախարարություն<br>ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարություն                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                | 2005 թ.<br>և շարունակական<br><br>ՄՖԿ օժանդակություն/ դրամաշնորհներ**                                                                           |
| IV.   | ՄԱԿ-ի «Մնապատգմման դեմ պայքարի մասին» կոնվենցիա                                                                                                                                                                                                                                                                                                                                            |       |                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                |                                                                                                                                                |
| 1.    | ՀՀ բնապահպանության նախարարությանն առընթեր անապատացման դեմ պայքարի կորդինացման հանձնաժողովի վերակազմավորում                                                                                                                                                                                                                                                                                 | 4     | ՀՀ բնապահպանության նախարարություն<br>ՀՀ արտաքին գործերի նախարարություն<br>ՀՀ քաղաքաշինության նախարարություն<br>ՀՀ ֆինանսների և Էկոնոմիկայի նախարարություն<br>ՀՀ գյուղատնտեսության նախարարություն<br>ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարություն<br>ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն<br>ՀՀ կրթության և գիտության նախարարություն<br>ՀՀ առողջապահության նախարարություն<br>ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե<br>ՀՀ կառավարությանն առընթեր արտակարգ իրավիճակների վարչություն<br>ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա | 2005-2010 թթ.<br><br>ՀՀ պետական բյուջե՝ համապատասխան մարմնի պահպանման ծախսեր                                                                   |
| 2.    | ՀՀ հողային, ՀՀ ընդերքի մասին                                                                                                                                                                                                                                                                                                                                                               | 5     | ՀՀ բնապահպանության նախարարություն                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                              | 2005-2007 թթ.<br><br>ՀՀ պետական բյուջե՝                                                                                                        |

|     |                                                                                                                                                                                                                                                                                                                                               |                            |                                                                                                                                                                                                                                                                                   |                                           |                                                                                        |
|-----|-----------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|----------------------------|-----------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|-------------------------------------------|----------------------------------------------------------------------------------------|
|     | օրենսգրքերում, «Ընդերքն օգտակար հանածոների շահագործման նպատակով ուսումնասիրության և արդյունահանման համար տրամադրելու (կոնցեսիայի) մասին» ՀՀ օրենքում հողերի տրամադրման վերաբերյալ հակասությունների բացահայտում և այդ օրենքներում փոփոխություններ կատարելու վերաբերյալ ՀՀ օրենքների նախագծերի մշակում և սահմանված կարգով հաստատման ներկայացում |                            | ՀՀ քաղաքաշինության նախարարություն<br>ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն<br>ՀՀ գյուղատնտեսության նախարարություն<br>ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարություն<br>ՀՀ կառավարության առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե                                        |                                           | համապատասխան մարմնի պահպանման ծախսեր                                                   |
| 3.  | «ՀՀ վարչատարածքային բաժանման մասին» ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի մշակում և սահմանված կարգով հաստատման ներկայացում                                                                                                                                                                              | 5                          | ՀՀ կառավարության առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե<br>ՀՀ բնապահպանության նախարարություն<br>ՀՀ գյուղատնտեսության նախարարություն<br>ՀՀ քաղաքաշինության նախարարություն<br>ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն<br>ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն | 2006 թթ.                                  | ՀՀ պետական բյուջե՝ համապատասխան մարմնի պահպանման ծախսեր                                |
| 4.  | «Երաշտի և այլ տարերային աղետների և տեխնածին վթարների ժամանակ բնակչությանը հրատապ օգնություն կազմակերպելու կարգի մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակում և սահմանված կարգով ՀՀ կառավարություն ներկայացնելը                                                                                                                             | 4, 5, 10, 20               | ՀՀ կառավարության առընթեր արտակարգ իրավիճակների վարչություն<br>ՀՀ բնապահպանության նախարարություն<br>ՀՀ գյուղատնտեսության նախարարություն<br>ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն<br>ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն<br>ՀՀ առողջապահության նախարարություն     | 2006-2007 թթ.                             | ՀՀ պետական բյուջե՝ համապատասխան մարմնի պահպանման ծախսեր                                |
| 5.  | Անապատացման դեմ պայքարի հարցերը կրթական ծրագրերում ընդգրկելու վերաբերյալ առաջարկությունների մշակում                                                                                                                                                                                                                                           | 19                         | ՀՀ կրթության և գիտության նախարարություն<br>ՀՀ բնապահպանության նախարարություն<br>ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա                                                                                                                                                                | 2005-2008 թթ.                             | ՀՀ պետական բյուջե՝ համապատասխան մարմնի պահպանման ծախսեր                                |
| 6.  | Մասնակցություն կոնվենցիայի V հավելվածի շրջանակներում իրականացվող տարածաշրջանային համագործակցությանը                                                                                                                                                                                                                                           | 2,11,12 V հավելված         | ՀՀ բնապահպանության նախարարություն<br>ՀՀ արտաքին գործերի նախարարություն<br>ՀՀ կրթության և գիտության նախարարություն<br>ՀՀ գյուղատնտեսության նախարարություն<br>ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն<br>ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա                                | 2005-2010 թթ.                             | ՀՀ պետական բյուջե՝ համապատասխան մարմնի պահպանման ծախսեր, ՄՖԿ օժանդակություն**          |
| 7.  | ՀՀ Կոտայքի մարզի խախտված հողերի վերականգնմանը (ռեկուլտիվացիա) ուղղված առաջնահերթ ծրագրերի մշակում և սահմանված կարգով հաստատման ներկայացում                                                                                                                                                                                                    | 2, 5, 10                   | ՀՀ բնապահպանության նախարարություն<br>ՀՀ գյուղատնտեսության նախարարություն<br>ՀՀ կառավարության առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե<br>ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա                                                                                                  | 2006-2008 թթ.                             | ՀՀ պետական բյուջե՝ ծրագրային ֆինանսավորում* ՄՖԿ օժանդակություն/ թյուն/ ղրամաշնորհներ** |
| 8.  | ՀՀ Կոտայքի մարզի խախտված հողերի վերականգնմանը (ռեկուլտիվացիա) ուղղված հաստատված ծրագրերի սահմանված կարգով իրականացում                                                                                                                                                                                                                         | 2, 5, 10                   | ՀՀ բնապահպանության նախարարություն<br>ՀՀ գյուղատնտեսության նախարարություն<br>ՀՀ կառավարության առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե<br>ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա                                                                                                  | 2007-2010 թթ.                             | ՀՀ պետական բյուջե՝ ծրագրային ֆինանսավորում* ՄՖԿ օժանդակություն/ ղրամաշնորհներ**        |
| 9.  | Ըստ մարզերի լված հանքավայրերի պաշարների գնահատում, ռեկուլտիվացիայի ենթակա տարածքների որոշում                                                                                                                                                                                                                                                  | 9,10, 13,17                | ՀՀ բնապահպանության նախարարություն<br>ՀՀ գյուղատնտեսության նախարարություն<br>ՀՀ կառավարության առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե<br>ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա                                                                                                  | 2006-2010 թթ.                             | ՀՀ պետական բյուջե՝ ծրագրային ֆինանսավորում, ՄՖԿ օժանդակություն/ ղրամաշնորհներ**        |
| 10. | Անապատացման պրոցեսների գիտահետազոտական աշխատանքների իրականացում և արդյունքների հրապարակում                                                                                                                                                                                                                                                    | 19                         | ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա<br>ՀՀ կրթության և գիտության նախարարություն<br>ՀՀ բնապահպանության նախարարություն                                                                                                                                                                | 2006-2010 թթ.                             | ՀՀ պետական բյուջե՝ ծրագրային ֆինանսավորում* ՄՖԿ օժանդակություն/ ղրամաշնորհներ**        |
| 11. | «Հայաստանում ՄԱԿ-ի «Անապատացման դեմ պայքարի մասին» կոնվենցիայի իրականացման մասին» ազգային զեկոլոգի պատրաստում                                                                                                                                                                                                                                 | 26                         | ՀՀ բնապահպանության նախարարություն<br>ՀՀ արտաքին գործերի նախարարություն<br>ՀՀ կրթության և գիտության նախարարություն<br>ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա                                                                                                                           | 2006-2007 թթ.                             | ՀՀ պետական բյուջե՝ ծրագրային ֆինանսավորում* ՄՖԿ օժանդակություն/ ղրամաշնորհներ**        |
| V.  | <b>«Միջազգային կարևորության խոնավ տարածքների մասին, հատկապես որպես քրաթռչունների բնակավայր» կոնվենցիա</b>                                                                                                                                                                                                                                     |                            |                                                                                                                                                                                                                                                                                   |                                           |                                                                                        |
| 1.  | «Արփի» ԱՊ-ի ստեղծման վերաբերյալ փաթեթի պատրաստում և սահմանված կարգով հաստատման ներկայացում                                                                                                                                                                                                                                                    | 4                          | ՀՀ բնապահպանության նախարարություն                                                                                                                                                                                                                                                 | 2005-2010 թթ.                             | ՄՖԿ օժանդակություն/ ղրամաշնորհներ**                                                    |
